ՊԱՇՏՈՆ	PR մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	13/10/23
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«Այ Դի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է PR մասնագետի ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկի մամլո հաղորդագրությունների, կայքում հրապարակվող նյութերի, հաղորդագրությունների, հաճախ տրվող հարցերի կազմում, խմբագրում, թարգմանություն
- Կայքում հրապարակվող տեղեկատվական ամփոփագրերի խմբագրում, սրբագրում, եռալեզու համապատասխանեցում
- Մամուլի մշտադիտարկում Բանկի և մրցակից ընկերությունների վերաբերյալ քննարկումների, հոդվածների հայտնաբերման նպատակով
- Բանկի իմիջին ուղղված PR միջոցառումների կազմակերպման աջակցում
- Բանկի ներքին հաղորդակցման նամակների կազմում, համաձայնեցում
- Համագործակցության պայմանագրերի խմբագրում, համաձայնեցում, հաստատման ընթացքի ապահովում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն լեզվաբանական, բանասիրական կամ համարժեք ուղղվածությամբ
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ որպես բովանդակագիր, խմբագիր, թարգմանիչ
- Համակարգչային ծրագրերի իմացություն
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Հաղորդակցման և թիմում աշխատելու հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ
- Աշխատանքի ճիշտ կազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ
- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- Սթրեսակայունություն, խիստ ժամկետների հետ աշխատելու ունակություն

- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, անհրաժեշտ է լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: